

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՅԵՏ

Մարդու մէջ սովորաբար տեսնուում են երեւոյթների երկու կարգ—Բնախօսական և Հոգեբանական։ Ըստ երեւութին դոքա հակառակ են թւում։ Հոգեբանական երեւոյթները ժամանակաւոր, հոգեւոր և վերացական են։ Նոցա մարդս հասու է լինում ինքնաքննութեամբ։ Իսկ բնախօսական երեւոյթները միշտ կան, նիւթական են, ունին տարածութիւն և նոցա չէ կարելի հասու լինել ինքնաքննութեամբ։ Այս երկու երեւոյթների այդ տեսակ տեսութիւնից հետեւում է այն թէ՛ «Հոգին զօրեղ է, իսկ մարմինը տկար»։ որով մարդը ներկայացնում է միութիւն երկու հակառակ երեւոյթների—բնախօսական և հոգեբանական։ Այդ սխալ հայեցողութիւնից հետեւում է այն թէ՛ հոգեբանական և բնախօսական երեւոյթները այնպէս միմեանցից խիստ կերպով տարբերուած և բաժանուած են, ինչպէս երկինքն երկրից։ Բայց իսկական քննութիւնը ցոյց է տալիս թէ՛ այդ երկու երեւոյթները սերտ շաղկապուած են միմեանց հետ այնպէս, որ շատ անգամ դժուար է ասել, որտեղ է վերջանում մէկը և որտեղից սկսուում միւսը։ Մարդն է գործարանաւոր էակ, որի մէջ միանում են հոգու և մարմնի հակառակութիւնը։ Ի հարկէ կարելի է վերցնել այնպիսի օրինակ, որտեղ դժուար չի լինի որոշել հոգեբանական երեւոյթը բնախօսականից, օրինակ, մտածողութեան և մարսողութեան գործողութիւնները, բայց և կարելի է վերցնել այնպիսի օրինակ՝ որտեղ հազիւ նկատելի է երկուսի սահմանը՝ որտեղ երեւում է թէ հոգին և մարմինն անմիջապէս մօտենում են միմեանց։

Նախ՝ ցոյց տանք որ՝ մեր հոգեկան գործողութիւնները կատարուում են արտաքին զրգոմունքներից և որ՝ հոգեբանական գործողութիւններն իրենց սկիզբն առնում են բնախօսականից։ Ով որ քննել է իւր մտքի ընթացքը՝ նա կհամաձայնի անշուշտ որ՝ մեր մտածողութեան յատկութիւնը և ուղղութիւնը կախուած է այն հանգամանքներից, գործողութիւններից և պատահումներից, որոնք շրջապատում են մեզ։ Մտքի ուղղութիւնը շատ անգամ կախուած է մեր տրամադրութիւնից, իսկ տրամադրութիւնը առաջանում է մարմնի լաւ և վատ դրութիւնից, հետեւաբար բնախօսական պատճառներից։ Նոյն իսկ երբ մարդս մտածում է վերացական և երեւակայական առարկաների վերայ, այն ժամանակ մինչև անգամ չէ կարելի ասել թէ պատճառը ջղերի զրգոումն չէ, օրինակ, բարձր համարողական (մատեմատիկական) բնազանցական հարցերով և երեւակայութեամբ պարապելը։

Պէտք է ասած որ՝ մեր մտածողութիւնը կատարուում է յաջորդաբար օրէկներով, օրինակ, անզղիացի երեւելի գիտնական Հօբբայ պատմում է թէ՛ Անգղիայի ներքին պատերազմի ժամանակ խօսակիցներից մէկը յանկարծ հարցրեց թէ՛ հոռմեական Դինարիան որքան արժողութիւն ունէր Տիբերիոսի ժամանակ, ըստ երեւութին հարցումը կապ չունէր ներկայ խօ-

սակցութեան հետ, բայց քննութիւնից դուրս եկաւ կապը, ներքին պատերազմի ժամանակ Անդրկիսցւոց Վարդուս Ա. թագաւորը գերի ընկնելով Հօալանդացւոց ձեռքը, ծախեցին նորան Անդրկիսցւոց 400,000 ֆուտ ստերլինգի: Քրիստոս նոյնպէս ծախուեց 30 արծաթի Տիրեքիոսի ժամանակ: Գորանից յայտնի երևումէ հոգեբանական երևոյթիւնների յարաբերութիւնը բնախօսական երևոյթիւնների հետ: Մեկ թւումէ թէ՝ մտածողութիւնը չէ կարող առաջանալ արտաքին տպաւորութիւններից՝ մինչդեռ ոչ թէ միայն մտածողութիւնը, այլ նոյն իսկ մարդու գործողութիւնները առաջանում են բնախօսական պատճառներից:

Բացի գորանից պէտքէ նկատել որ՝ այն մարդիկը որոնք կորցնում են արտաքին զգացողական գործարաններից մէկը, միևնոյն ժամանակ կորցնում են և այն ներկայացումները, որոնք առաջանում են այդ գործարանների օգնութեամբ: Գօկտօր Հեյֆելը պատմումէ մէկ 17 տարեկան կոյր աղջկայ մասին, որ նա իւր այն բոլոր հասկացողութիւնները, որոնք առաջանում են տեսութեան գործարանով, կորցրել էր բոլորովին, մինչդեռ կուրացած էր 10 տարեկան հասակում: Այդպիսի հանգամանքներում խանգարուում էր թէ միայն աչքի արտաքին գործարանը, այլ և ուղեղի այն մասերը, որոնք կազմում են արտաքին գործարանը այդ զգայարանի այսինքն տեսարանական բլբակները, եթէ վերջիններն անփնտ են, միայն փնտսուած է աչքը, գոյնների ներկայացումը և իրերի ձևերը միևնոյն ոյժն են ունենում, ինչ որ ունէին նոքա՝ նախ քան տեսողութեան փնտսուիլը:

Հոգեկան երևոյթիւնները սկիզբն են առնում՝ բնախօսական երևոյթիւններից և վերջանում են նոյնպէս բնախօսականներով — այսինքն մկանուկների շարժողութեամբ: «Երբ ծիծաղումէ մանուկը՝ տեսնելով խաղալիքը, երբ հալածուումէ Գարիբալդի դէպի իւր հայրենիքը ունեցած չափազանց սիրոյ համար, երբ դողումէ օրիորդը առաջին սիրոյ վերայ մտածելու ժամանակ, երբ ստեղծումէ նիւտոն տիեզերական շարժման օրէնքները և զրում՝ նոցա թղթի վերայ՝ այդ ամեն գործողութիւններին վերջնական պատճառ յայտնուումէ մկանական շարժողութիւնը» (Սեչենով): Երբ մարդ իւր հոգեկան գործողութիւնը արտայայտումէ ձայնով՝ այն ժամանակ շարժում են նորա կոկորդի մկանուկները, երբ իւր միտքը գրումէ նամակի վերայ՝ շարժում են նորա ձեռքի մկանուկները, երբ նա իւր միտքը ամփոփումէ մի որևիցէ գործի կամ առաջարկութեան վերայ՝ յառաջացնումէ բաղմամբիւ մկանական շարժումներ:

Մեր ասածից հետեւում որ՝ հոգեկան գործողութեան սկիզբն և վերջը բնախօսական երևոյթ է, իսկ մէջտեղը հոգեբանական, այսինքն սկսուում են ջղերով՝ վերջանում են բնախօսական երևոյթներով, օրինակ, երբ ուսուցիչն աշակերտին առաջարկումէ մի որևիցէ հարցում, այն խօսումը և յիշողութիւնը, որ աշակերտը կազմումէ հարցման վերայ՝ արդեօք նա հոգեկան երևոյթ է՝ թէ նորա հետ կից է և բնախօսական երևոյթ, ամեն օրւայ փորձերը ցոյց են տալիս որ՝ նա կից է և բնախօսական գործողու-

թիւներէի հետ: Մարդ խորին և երկարատե մտածութիւնից յետոյ՝ բոլորովին յողմումէ, զլուխը ծանրանում՝ և անընդունակ է լինում՝ մի որևէիցէ աշխատանքի: Հափաւոր աշխատութիւնից յետոյ մարդու ախորժակը բացուումէ, իսկ չափազանց մտաւոր աշխատութիւնը նիհարացնում՝ և խանգարումէ գործարանները: Փորձը ցոյց է տալիս որ՝ չափազանց մտաւոր աշխատութիւնից ուղեղի մոխրագոյն նիւթը փոխուումէ: Այժմ յողմած մկանք չէ հանդստանում և կորցրած նիւթի չափ սնունդ չէ ստանում՝ մարդս նիհարանումէ: Հափազանց երկարատե մտաւոր աշխատութիւնից յետոյ և կամ առաւելապէս մտքի անկանոն գործողութիւնից ուղեղի մոխրագոյն նիւթը պակասումէ: Դիակի կտրած ժամանակ տեսել են որ՝ այդ նիւթը լինում է գունատ: Հաստութիւնը կիսով չափ քչացած և ոչնչացած մասերի տեղը առաջացած ջրային հեղուկ: Մոխրագոյն նիւթի վերջանալով թուլանում են մտաւոր կարողութիւնները, հոգին չէ ունենում իւր առաջւայ սլացումն ու պայծառութիւնը: Երկու հետեւ առաջանումէ բթութիւն և ապշութիւն, որի ողբալի օրինակներն են շատ նշանաւոր և երեւելի հանճարներ, որոնք կորցրել են բոլորովին իրենց մտաւոր ընդունակութիւնները, օրինակ՝ Հելլեդրիլն և Ալինաու բանաստեղծները և Վոմպոզիտօր Բեալիօփիեր և այլն: Այդ երեւոյթները չէին պատահիլ՝ եթէ մտածողութիւնը լինէր լոկ հոգեկան գործողութիւն: Այստեղ մէջ բերենք «*Բնֆիզիկան*» (*Ֆիզիկան*) *«Ինքն»* և *«Ինքն»* Տինդալի ասած խօսքը. «ես մտածումեմ», ասումէ նա, որ բոլոր երեւելի մտածողները, որոնք ուսումնասիրած են այդ առարկան (բնագիտութիւնը), պատրաստ են ընդունելու հետեւեալ ենթադրութիւնը. — իւրաքանչիւր իմացողութեան կամ ճանաչողութեան գործողութիւնը լինի այդ գործողութիւնը շօշափումն մտածումն կամ զգացողութիւն, դա համապատասխան է ուղեղի մէկ որոշ հիւլէական շարժմանը (*молекулярное*): Երբ յայտնի է ուղեղի գրութիւնը՝ կարելի է հետեցնել նորանից մտքի կամ զգացողութեան գրութիւնը, և կամ եթէ յայտնի է միտքը կամ զգացողութիւնը՝ նորանից հետեցնել ուղեղի գրութիւնը: Ի հարկէ ուղեղի այս կամ այն հիւլէական (մոլեկուլիարական) գրութիւն ստանալը լինումէ ջրերով, եթէ կայ ջրերի հիւլէական շարժալուծիւն, կայ և հոգեկան երեւոյթ, եթէ չկայ առաջինը, չկայ և երկրորդը: Սորանից բացառութիւն չէ կազմում ոչ մէկ միտք և ոչ մէկ զգացողութիւն:

Դիտողութիւնները ցոյց են տալիս որ՝ ուղեղի քաշը և ծաւալը, համեմատութեամբ մտքի հետ, նոյնպէս նորա կազմակերպութիւնը և քիմիական բաղադրութիւնը, մեծ ներգործութիւն ունին հոգեկան գործողութիւնների վերայ: Մարդու ուղեղը պէտք է ունենայ մէկ որոշեալ չափ (մինիմում) թէ քաշի և թէ ծաւալի կողմից, որից ստորն անկարելի է որ՝ նշանաւոր փնտս չառաջացնի հոգեկան գործողութիւնների վերայ: Այն մարդիկը, որոնք չունին գոնեայ ուղեղի քաշի և ծաւալի չափը՝ նոցա հոգեկան գործողութիւնները չափազանց պակաս և թույլ են, այդպիսի-

ներն են փոքրագլուխները — Պերոցեֆալները, Փոքրագլուխները ներկայացնում են կատարեալ նմանութիւն կապիկների հետ, թէ իրենց արտաքին շարժումներով և թէ մտաւոր ընդունակութիւններով, նոքա ինչպէս կապիկները՝ շատ են սիրում փայլուն իրերը և նոցա ձեռք բերելու համար մեծ ջանք են գործ դնում, նոցա կազմութիւնը ևս շատ է նմանում կապիկներին, Մի փոքր ժամանակ չեն կարողանում հանգիստ նստել, միշտ շարժողութեան մէջ են, նոքա համարեա հասկացողութիւն չունին, միայն արտաքին շարժողութիւնից են հասկանում մէկի նպատակը, օրինակ բարկութիւնը կամ սէրը, ի հարկէ շատ անգամ հակառակն են ըմբռնում, նոցա յիշողութիւնը թոյլ է, թէև երբեմն մի քանի անձնաւորութեանց կարողանումն ճանաչել, դոքա նմանցնելու մեծ յարմարութիւն ունին, ինչպէս և կապիկները:

Մեր ասածներից հետեւում է որ՝ ուղեղի քաշը և ծաւալը մտքի առատութեան պատճառներն են (թէև բացի դոցանից ուրիշ պատճառներ ևս կան մտքի առատութեան, որոնց մասին յետոյ կխօսենք), Բայց այս յայտնի է որ՝ երեւելի մարդկանց ուղեղի քաշը սովորական մարդկանց ուղեղի քաշից աւելի են եղել, օրինակ, բնագէտ Սիւվէրի ուղեղը կշռում էր 1861 գրամ (առողջ մարդու ուղեղի միջին քաշը է 1424 գրամ կամ 2 փունտ 25¹/₂ ւոտ), Շիլլերի ուղեղը կշռել են՝ երկու անգամ ծանր է եղել մէկ ապուշի (Идиотъ) ուղեղից, Ապուշների ուղեղը համապատասխան իրենց գանգլին միշտ ³/₄ կամ ¹/₂ -ով քիչ են կշռում, Սկսած ստոր կենդանիներից բարձրանալով մինչև մարդը՝ հետզհետէ հոգեկան գործողութիւնները ևս բարձրանում են և գլխի ուղեղի քաշը համեմատութեամբ նոցա մարմնի հետ աւելի շատանում է, Ուղեղի քաշի մարմնի հետ ունեցած միջին յարաբերութիւնը՝ սկսած ստոր կենդանիներից, օրինակ ձկներինը՝ այնպէս է համեմատում ինչպէս 1, 5, 668, սողուններինը 1, 321, թռչուններինը 1, 212, կաթնասուններինը 1, 186, Եթէ համեմատենք զանազան ցեղի շների, մարդակերպ կապիկների և մարդու ուղեղը միմեանց հետ, կտեսնենք որ՝ աւելի մտացի ցեղին պատկանողինը տարբերութեամբ միւսներից իւր ուղեղի մեծութեամբ, կիսազնգաձեւութեամբ և ծալքերի բազմութեամբ, Այդ տարբերութիւնը յայտնի տեսնուում է մարդու և միւս կենդանիների մէջ:

Երկրորդ յատկութիւնը ուղեղի, որ մեծ ազդեցութիւն ունի հոգեկան գործողութիւնների վերայ, է նորա կազմութիւնը կամ թէ նորա ձևը, նոյնպէս մոխրագոյն ուղեղի ծալքերի ճշդութիւնը, Այդ մոխրագոյն կամ կարմրաշորթ մոխրագոյն ծալքերը, որոնք գտանուում են ուղեղի արտաքին մակերևութի վերայ՝ առ այժմ ընդունուած է որ՝ նոքա մեծ ազդեցութիւն ունին հոգեկան գործողութիւնների վերայ, Որքան այդ ծալքերը խոր, շատ և զանազան են, այնքան հոգեկան գործողութիւնները ևս բարձր են, իսկ որքան սակաւ և հասարակ՝ հոգեկան գործողութիւններն ևս այնչափ աւելի թոյլ և անշան են, Փոքրագլուխ մարդկանց մոխրագոյն ուղեղի ծալ-

քերը հասարակ են և թիւը շատ սակաւ. մինչդեռ նշանաւոր գիտնականներին ուղեղը զանազանութեամբ միւսներինց լազմաթիւ ծալքերով, Ծալքերի բազմութեամբ մեծանումը և ուղեղի մակերևոյթը, որովհետեւ շատանումը մոխրագոյն նիւթը և դորանով բարձրանում է մարդու հոգեկան գործողութիւնները, եթէ համեմատենք մէկ երեւրի աստեղագետի ուղեղը առողջակաղմ մշակի ուղեղի հետ, մեծ տարբերութիւն կգանենք առաջին և երկրորդի մէջ, երկրորդի ուղեղի ծալքերը կտեսնենք հասարակ են ինչպէս և իւր պարապմունքը, իսկ առաջինը տարբերութեամբ զանազանատեսակ և բազմաթիւ ծալքերով:

Երրորդ յատկութիւնը ուղեղի, որ նշանաւոր աղգեցութիւն ունի նոյնպէս հոգեկան գործողութիւնների վերայ, նորա քիմիական կաշմութիւնը, նոյնպէս նորա մէջ եղած ճարպի յայտնի քանակութիւնն է: Աննդանիներին և մարդու ուղեղի մէջ գտանուումը մէկ որոշեալ քանակութիւն ճարպի, որի շատութիւնը կամ սակաւութիւնը մէկ որոշեալ սոհման ունի: Այս երևումը նորանից, որ ուղեղի ճարպի քանակութիւնը չէ պակասում հիւանդութեանց ժամանակ, մինչդեռ մարմնի միւս գործարանները նիհարանումեն, այսինքն ճարպի քանակութիւնը պակասումը նոցա մէջ, և ընդ հակառակը՝ նա չէ շատանում՝ երբ մարդ գիրանումը կամ երբ փորձի համար գիրացնումեն մի որեւիցէ կենդանի: Ամենից շատ ճարպ ունի կենդանիների մէջ մարդու ուղեղը, յետոյ միւս կաթնասունների և ապա թռչունների: Որչափ գործունեայ են հոգեկան երեւոյթները և որչափ բարդ և զօրեղ է զխի ուղեղի ջղերի գործնէութիւնը, այնքան նա շատ ճարպ է պարունակում: ճարպի ամենամեծ քանակութիւնը լինումը այրական հասակում:

Մեր մէջ բերած հոգեկան և բնախօսական փաստերը ցոյց տուին մարմնի ներգործութիւնը ընդհանրապէս կամ ամբողջապէս հոգու վերայ: Հիմայ մէջ բերենք մասնաւոր փաստեր, որոնք ցոյց են տալիս այն կապը, որ կայ մարդու հոգեկան և ֆիզիքական կեանքի մէջ: Այս ևս պէտքէ ասած, որ մի քանի վերին հոգեկան գործողութիւններ սկզբում յայտնուումեն անդրադարձութեան (բեֆլեկսի) ձևով, որը առաջանումը ջղերով: Ինչպէս օրինակ, տեսողութեան, լսողութեան և միւս զգացողական գործողութիւնները սկզբում կախումն ունին ջղերի դրութիւնից, նորածին մանուկները իրենց ծննդեան առաջին շաբաթում չեն կարողանում իրենց ուշադրութիւնը կետրոնացնել (fixer) մի որեւիցէ առարկայի վերայ, իսկ հետոհետէ կարողանումեն: Մարդու աչքը կազմուած է այնպիսի ձևով, որ մինչև առարկայի ճառագայթները չեն ժողովում ցանցամաշկի կամ գեղին բծի (րետին) վերայ, մարդս չէ կարողանում պարզ տեսնել, եթէ մենք կամենումենք լաւ նայել մի որեւիցէ առարկայի վերայ, պէտքէ մեր աչքին այնպիսի ուղղութիւն տանք, որ առարկայի նկարը լինի ուղղակի գեղին բծի վերայ: Լոյսի և գոյների պարզութիւնը մեզ բաւականութիւն է պատճառում: Իւրաքանչիւրը համարեա նկատած է, երբ մարդ

մանուսկրի աղօտ լուսավորումը սենեակից մեկ պայծառ լուսավորումը սենեակի մեկ տեսակ բաւականութիւն է զգում: Այդպէս ևս՝ երբ մանուկին պատահում է աչքը այնպէս բռնել, որ նորա աչքի զեղին բծի վերայ անդրադառնում է առարկայի նկարը՝ մանաւանդ պայծառ լուսավորումը առարկայի նա աշխատում է աչքը այդ դրութեան մէջ պահել, որովհետեւ այդ զգացողութիւնը առաջացնում է նորանում բաւականութիւն, ուրեմն աչքը պահել այդ դրութեան մէջ նշանակում է ուշադրութեամբ նայել առարկային կամ կետրոնացնել նորա վերայ իւր ուշադրութիւնը:

Լսողութեան ժամանակ միեւնոյն զգացողութիւնն է պատահում ինչ որ տեսողութեան ժամանակ, այսինքն մանուկին բաւականութիւն է պատճառում: Յայտնի է որ՝ փոքր մանուկները սիրում են շատախօսութիւն, և մի որեւիցէ առարկայի ձայնը թէ և ինի այդ անխմստի այնու ամենայնիւ բաւականութիւն է պատճառում նոցա, որքան այդ բաւականութիւնը զօրեղ է, այնքան նա աշխատում է որ՝ իւր լսողութեան գործարանը մի և նոյն դրութեան մէջ մնայ, և լսողութեան գործարանի այդ դրութիւնը լինում է այն ժամանակ, երբ ձայնի ալիքները հաւասարաչափ են ներդործում երկու ականջի վերայ ևս: Այդպէս սկզբնական ուշադրութիւնը կամ կետրոնացումն ուշադրութեան, ջղերի և արտաքին զգացողութիւնների հետեանքն է: Միեւնոյնը պէտքէ ասած և միւս զգացողական գործարանների մասին:

Վերլուծութիւնը (анализъ) և համադրութիւնը (синтезъ) սկզբում կախումն ունին ջղերի դրութիւնից: Օրինակ մանուկը նայում է մեկ պատկերի վերայ, նա սկզբում տեսնում է ամբողջ նկարը, յետոյ տեսնում է որ նա բաղկացած է զլիւից, պարանոցից, իրանից, ձեռքերից և ոտներից, և եթէ ուշադրութեամբ նայում է՝ նա որոշում է պատկերի ամեն մեկ դիմն ունգամ՝ արդեօր ինչպէս է առաջանում վերլուծութիւնը և համադրութիւնը ինքն ըստ ինքեան, այդ կախում է աչքի ընդունակութիւնից, կամ կազմութիւնից, որ կարողանում է զգալ կամ տեսնել առարկայի մեկ կէտը անկախ միւս կէտերից և միեւնոյն ժամանակ բոլոր կէտերը միանգամայն: Այդ հանգամանքը առաջանում է տեսողական ջղից՝ հետեաբար աչքի նիւթական կազմութիւնից:

Մեր ջղերը բաղկացած են բազմաթիւ թելերից կամ ցանցերից, որոնք իրենց ստացած տպաւորութիւնները և զգացողութիւնները, իւրաքանչիւրը առանձին առանձին տանում է և հաղորդում իւր կետրոնին, շտալով ճանապարհին այդ զգացողութիւնը մեկ ուրիշ թելի, մաշկացանցի մակերեւութի վերայ վերջանում են ջղերի ցանցերը՝ իւրաքանչիւրը ջոկ ջոկ, բայց բոլորը միասին միութիւն՝ այսինքն մաշկացանցը կազմելով: Մանուկը կարող է ամբողջապէս տեսնել պատկերը, երբ նա անդրադառնում է մաշկացանցի վերայ և կարող է առանձին նայել նորա մի որեւիցէ մասին, օրինակ քիւն, օգուտ քաղելով այն ցանցերից, որոնց վերայ ընկնում է պատկերի այդ մասի նկարը, այն ժամանակ ամենից լաւ տեսնում է քիւնը, քիւն թոյլ, բերանը

և աչքերը վերջապէս ամենից վատ տեսնումէ ոտները ինչպէս քմից ամենահեռաւոր մասը այդ պատկերի Միենոյնը պէտքէ ասած և լսողական գործարանների համար՝ որ նորա ջիղը ևս բաղկացած է ցանցերից, որոնցով կատարուումէ վերլուծութիւնը և համադրութիւնը. օրինակ երաժշտութեան ժամանակ կարողանումենք լսել բոլոր գործիքների ձայնը միասին (համադրութիւն) և կարողանումենք առանձին առանձին որոշել իւրաքանչիւր գործիքի ձայնը (վերլուծութիւն), ի հարկէ սորանից երևումէ որ՝ իւրաքանչիւր ձայն ունի իւր համապատասխան ցանցերը կամ ինչպէս կոչուումեն, կլավիշները. մարդու կլավիշները համարուումեն ընդ 3,000, այդ է պատճառը որ՝ նա կարողանումէ որոշել ամենացած ձայնն անգամ Մեր ասածից երևումէ վերլուծութեան և համադրութեան կախումը ջղերի մարմնակազմական (անատոմիական) գրութիւնից:

Ինչպէս ասացինք վերլուծութիւնը և համադրութիւնը կախուած է ջղերի գրութիւնից (система): Մեր ջղական գրութեան կազմութիւնը այնպէս է, որ մէկ ջղի շարժողութեան մասը անցնումէ միւս ջղի վերայ ևս—զգացողականից՝ շարժողական ջղի վերայ: Շատ անգամ մանուկը սաստիկ լոյսի տպաւորութիւնից միանական շարժում է անում—ահա այս է ջղերի անդրադարձումը—մէկ ջղից միւսի վերայ: Երբ մանուկի աչքի դիմաց կայ մի որ և իցէ պայծառ լուսաւորուած առարկայ, նա ճշումէ, ճիւղումէ, ձեռքերը ոտները և իրանը շարժումէ, սորա պատճառը այն է, որ գրգռումն անցնելով տեսողութեան զգացողական ջղից՝ անդրադառնումէ շարժողական ջղի վերայ, որը գնալով ճիւղաւորուումէ ձեռքերու մի ոտներում և մարմնի այլ մասերում: Այդ պատճառաւ զանազան տպաւորութիւնները և ներկայացումները կազմումեն ամբողջ խումբ ներկայացումների առարկայի մասին. օրինակ այսպիսի մէկ դէպք, մանուկը տեսնումէ զանգակը, լոյսի տպաւորութիւնը գնալով տեսողութեան ջղից, անցնումէ ձեռքի շարժողական ջղին, և ահա մանուկը ձեռքը երկարացնումէ դէպի զանգակը. երբ նա զանգակը տեսնումէ՝ ձեռքը ստանումէ շօշափողութեան զգացողութիւն և յետոյ ձայնի զգացողութիւն, այդ կերպով կազմումէ մէկ խումբ ներկայացումների՝ զանգակի ձեւի և կարծրութեան վերայ: Երբ մանուկը սակաւ ինչ մեծանումէ և սկսումէ խօսել, այդ երեք ներկայացումների վերայ աւելանումէ մէկ ուրիշն ևս—զանգակի անունը, այն է, զնգ—զնգ. զանգակի այսպէս անուանելու պատճառն է լսողութեան գործարանի անդրադարձութիւնը (рефлексъ) լեզուի վերայ, այսինքն խօսելու գործարանի վերայ: Եթէ զօւք մանուկին ասէք զնգ—զնգ, նա իսկոյն կներկայացնի զանգակի ձեւը՝ կմտաբերի ձայնը և կարծրութիւնը, նորա մօտ եթէ զանգակը խփէք, իսկոյն նա կասի զնգ—զնգ, կներկայացնի նորա ձեւը ևլն:

Ջղերով մեր ստացած զգացողութիւնները, ներկայացումները կամ տպաւորութիւնները համազօր չեն լինում՝ շատ անգամ՝ նայելով հանգամանքին, օրինակ մենք պատահում ենք մինչև այժմ՝ մեզ անձանօթ մէկ

մարդու ծանօթանումներ նորա հետ իմանումներ նորա անունը միտքներս ենք պահում նորա երեսի գծագրութիւնը և ձեւը այնպէս որ նորա հետանալուց յետոյ կարող ենք նորան նկարագրել և անունը յիշել։ Անցնելով երկայն ժամանակ՝ մենք նորան չենք պատահում և չենք տեսնում, երբ յանկարծ պատահում ենք միմեանց, սկիզբը չենք ճանաչում նորան, պատահում է որ՝ յիշում ենք նորան հանդիպելը, յիշում ենք նորա հետ եղած խօսակցութիւնը, բայց պատահում է որ՝ չենք կարողանում յիշել նորա անունը։ Եթէ ուրիշից շլտենք նորա անունը, շատ կարելի է մոռանալք բոլորովին, իսկ ընդհանրապէս, նորա երեսի գծագրութիւնը և ձեւը յիշում ենք, և լինում է դորա հակառակը։ Լսում ենք մի որեւիցէ անուն, յիշում ենք որ՝ այդ անունը մեզ ծանօթ է, յիշում ենք որ՝ մենք ծանօթ էինք երբեմն այնպիսի անուն կամ ազգանուն ունեցող մարդու հետ, բայց նորա երեսի գծագրութիւնը և ձեւը չենք կարողանում ներկայացնել մեզ։ Այդպիսի երևոյթների պատճառը, որոնք յաճախ են պատահում, ինչպէս ասացինք՝ զգացողութիւնների և ներկայացումների աջ համագոր լինելն է։ Շատ անգամ զանազան մասնաւոր հանգամանքների պատճառաւ աւելի ուշագրութիւն ենք դարձնում մարդու ձեւի վերայ քան նորա անունը, և շատ անգամ ևս անուան վերայ և դորա համար կարողանում ենք յիշել կամ մտաբերել նորա ձեւը քան անունը, և երբեմն ևս ընդ հակառակն։

Լինում է երբեմն որ՝ մէկ ներկայացման կամ տպագրութեան անյայտաւարով կամ ոչնչանալով, ոչնչանում է և այն ներկայացումը կամ տպագրութիւնը, որ կապ ունի նորա հետ, օրինակ մենք մի որեւիցէ մարդու սովոր ենք եղել տեսնել մէկ յայտնի տեղում, տան մէջ ևլն. այնպէս որ՝ մեր այդ տեղի վերայ ունեցած ներկայացումը կապում է մեզ յայտնի մարդու ներկայացման հետ։ Բայց ասենք այդ մարդը այլ ևս չէ պատահում, կամ սաստիկ հիւանդութեան պատճառաւ կամ հեռացել է այն տեղից կամ մեռել է, և ահա առաջուր ներկայացման կապը հեռահեռ է ոչնչանում։ Աւրիշ օրինակ։ Մի որ և իցէ մարդու մենք տեսել ենք միշտ խղճութեան մէջ, և աննշան ընկերութենում, դուռնաւ և նիհար, և ահա այդ մարդը հարստանում է, պաշտօններ և աստիճաններ է ստանում և գիրանում, մեր ունեցած հին ներկայացումները այդ մարդու վերայ հեռահեռ անկի են տալիս նորերին։

Բարձր հոգեկան կեանքի գործողութիւնները ևս սերտ կապ ունեն մէկ քանի բնախօսական երևոյթների հետ, օրինակ բանաստեղծութիւնը, Պրանսիացի երեւի վիպասան Բալզակը տարօրինակ առողջապահութիւն էր քաբաղում բանաստեղծ—մտանշանների համար. ահա նորա խօսքերը « Եթէ կամենաւ մենք որ՝ մեր սերունդն ընդունի մեզ իբրեւ մտանշաններ, մենք պէտքէ բոլորովին մեկուսանալք երկու կամ երեք տարի, այդ ատանձնութեան մէջ ոչինչ չպէտքէ խմելք, բացի ջրից, և ուրիշ բան չպէտքէ ուտելք, բացի խաշած լոբիայից, պէտքէ պարկենք արեւը մանե-

լուց անմիջապէս յետոյ և արթնանալ կէս զիշերին, որպէս զի կարողա-
նանք աշխատել մինչև առաւօտ, իսկ մնացեալ ժամանակը պէտքէ անց-
նենք մեր աշխատութիւնը աչքի անցնելով, տարածելով, սրբազրելով
և շնչաւ Բայրոնի օրը կամ առաւօտը սկսուումէր ճաշից, մինչդեռ նորա բա-
րեկամները վայելում էին առատ ճաշը, նա բաւականանումէր սակաւ ինչ
ընդեղենով և ջրով։ Երեկոյեան 7 ժամին բարեկամներին բարի գիշեր ասե-
լով՝ գնումէր քնելու, արթնանալով միւս օրւայ ճաշի ժամանակ և այդ-
պէս շարունակ։ Սովածութիւնից և անքնութիւնից նա շատ անգամ
կորցնումէր իւր ճանաչողութիւնը և հասկացողութիւնը, դարձ համար
շատ անգամ տեսնում էին նորան արշալուսին թափառելիս Place de ca-
roussel—ում՝ զխաբաց, հողաթափներով և գիշերային զգեստով, առանց
իրան հաշիւ տալու թէ ինչպէս է եկել և ընկել այնտեղ։ Բայրոնի մասին
յայտնի է որ՝ համարեա ամբողջ գիշերներ աշխատումէր անընդհատ՝ անց-
նելով իւր քաղցը սիգար ծխելով կամ ծխախոտ ծամելով կամ առանց
շաքարի և կաթի կանաչ թէյ խմելով։ Ինչպէս Բալզակը, նոյնպէս Բայրոնը
ևս միտ չէին ուտում և ոչ էլ գինի խմում, որպէս զի այդ միջոցով ա-
ւելի կարողանան պահպանել ուղեղի գործնեութիւնը։—Շիլլերը ևս սի-
րում էր աշխատել գիշերները, նա շատ սուրճ և շամբանայ էր խմում,
նորա մասին պատմումեն որ՝ իւր երեւակայութիւնը գրգռումէր արհեստա-
կան միջոցով, օրինակ նա բոլորովին լաւ չէր կարողանում պարապել
եթէ փոտած խնձորի հոտ չէր առնում, և այդ պատճառով նորա պա-
րապման սեղանի վերայ գտնուում էին միշտ փոտած խնձորներ, Վալ-
տեր—Սկօտտի համար պատմումեն որ՝ իւր երեւելի բանաստեղծական եր-
գերը գրել է սարսափելի հոգեկան նեղութիւնների ժամանակ, օրինակ
«Իվանգոսէն» և «Լամբրմուրեան հարսը»։ Գիկենսի համար ասումեն որ՝
նա չէր կարողանում լաւ մտածել և գրել, եթէ նորա առջև չէին գտնու-
ում փոքրիկ արդյոք ծածաններ, ինչպէս և կապոյտ մեղան և հասարակ
գրիչ։ Երբ սաստիկ աշխատութեան սէրը գրաւումէր նորա մտքը, նա
ընկնումէր և թափառում ամբողջ քաղաքը, ուշադրութիւն չդարձնե-
լով ամենեւին եղանակի վերայ, որը ի հարկէ շատ անգամ լինումէր ի վնաս
իւր առողջութեան։

Այդպիսի մի քանի դէպքեր յայտնի են և գիտնականների մասին, օրի-
նակ Բիւֆօնը չէր կարողանում մէկ լուրջ բանի վերայ մտածել, եթէ չէր
հագնուած բոլորովին և մազերը կարգաւորած, և դարձ համար ծամալար
գարը (պարիկմախերը) գալիս էր օրական երկու երեք անգամ, որպէս զի
նորա մազերը նորից զարգարի և կարգաւորի։—Կանտը ճաշի զբօսանքից
յետոյ՝ սովորաբար մտածումէր վերջալուսի ժամանակ և դորա համար աշ-
խատումէր նստել այնպէս, որ իւր աչքի առջև լինի մի որեւիցէ հին աշտա-
րակ։ Այդ հին աշտարակը այնքան անհրաժեշտ էր նորա համար, որ երբ
նորա պատուհանի զիմացի կողամախիները մեծացան և ծածկեցին նորա աչ-
քից այդ աշտարակը, նա բոլորովին անընդունակ դարձաւ մտածելու, մինչև

որ կորեցին կազմակերպելը և նորից երեւցաւ աշտարակը, և լին. շատ օրինակներ:

Թէ հոգեկան երեւոյթները անբաժանելի կերպով կապուած են բնախօսական երեւոյթների հետ, զորա մասին կարող ենք բերել այնպիսի օրինակներ, որոնց մէջ հոգեկանը այնպէս սերտ հիւսուած է բնախօսականի հետ, որ դժուար է ցոյց տալ այն գիծը, որով այդ երկուսը որոշուում են միմեանցից, զոցա մասին շատ օրինակներ կան մանուկների հոգեկան կեանքի մէջ: Մանկան սկզբնական հոգեկան կեանքը յայտնի կերպով տարբեր է հասակաւորից, նա (մանուկը) չունի այն ազատութիւնը, ճանաչողութիւնը կամ հասկացողութիւնը, որ ջմտութիւնը, կեանքի այն բարդ եղանակները, որը ունի հասակաւոր մարդը: Մանկան կեանքը ներկայանում է մեզ իբրեւ մէկ բարդ անդրադարձութիւն երբ մանուկը տեսնում է մի որեւիցէ փոյլուն առարկայ, նա մեկնուում է դէպի այդ առարկան, այստեղ ներգործում է տեսութեան ջիղը շարժողութեան ջղի վերայ, հետեւաբար այդ երեւոյթը ըստ իսկականին բնախօսական է, բայց նորանում մի և նոյն ժամանակ կայ հոգեկան երեւոյթի տարր ևս, տեսնելով փոյլուն առարկան՝ մանուկը ունենում է ուրախութեան զգացում:

Մանուկը տեսնելով անհաճոյ և երկիւղալի առարկայ, սկսում է աղաղակել, լաց լինել և դանդաղ շարժողութիւններ անել և լին. ըստ էութեան այդ երեւոյթը ևս բնախօսական է—այսինքն անդրադարձութիւն է. բայց միացած զգացողութեան հետ այսինքն երկիւղի: Երբ մանուկը սկսում է քայլել, այդ ժամանակ նա կետրոնացնում է իւր բոլոր հոգեկան և ֆիզիքական ոյժը. իւրաքանչիւր քայլը նորան մեծ աշխատութիւն և հոգս է պատճառում, որովհետեւ նա մտածում է իւր շարժողութեան վերայ, եթէ այդ ժամանակ զրաւէք նորան մի որեւիցէ առարկայով, նա անպատճառ վաշթ կընկնի, բայց կէս տարուց յետոյ, միևնոյն մանուկը տեսնում է վազվզում է թիթեռնիկների յետեւից չմտածելով ամենևին վայր ընկնելու վերայ: Սկզբում քայլելը ֆիզիքական և հոգեկան երեւոյթ է, իսկ երբ մարդ մեծանում է, նա մեքենական է դառնում՝ բոլորովին:

Հոգե—բնախօսական երեւոյթների մեքենականի փոխուիլը՝ կարելի է նկատել նոյն իսկ հասակաւոր մարդու կեանքի մէջ ևս: Երբ հասակաւոր մարդը սովորում է մի որեւիցէ գեղարուեստական գիտութիւն (տիկնիկական) օրինակ երգել երաժշտական գործիքների վերայ, սկզբում բաւական չի ճիգ է թափում իւր անհնազանդ մատները արագ շարժելու համար, բայց վարժողութիւնից յետոյ, առանց որ և իցէ դժուարութեան մատները մեքենաբար վազում են երգիչանի ստեղծութիւնների վերայ:—Երբ սովորում ենք մի որեւիցէ տարր լեզու, սկզբում դժուարանում ենք քերականական կանոններով և առանց կակազելու խօսելում, բայց վարժողութիւնից յետոյ խօսում ենք կանոնաւոր և առանց մի որեւիցէ դժուարութեան: Այդպիսի դէպքերում ոչ որ է կարող ցոյց տալ թէ՛ որտեղ է դադարում հոգեկան գործողութեան մասնակցութիւնը և որտեղից է սկսուում դառնալ բոլորովին բնա-

խօսական, Կարելի է ցոյց տալ այնպիսի օրինակներ ևս, որտեղ մեքենական երևոյթները փոխուում են հոգեկան երևոյթների, Քայլելու գործողութիւնը կատարուումէ առանց որ և իցէ գիտակցութեան կամ մտածողութեան, ուշադրութիւն չդարձնելով ամենեին մեր ոտների շարժողութեան վերայ, երբ մեր առջևի ճանապարհը ուղիղ և հարթ է, բայց վատ ճանապարհով քայլելը պահանջումէ ուշադրութիւն, անդադար պէտքէ ուշադրութիւն դարձնելք մեր ոտների շարժողութեան վերայ՝ ընտրելու նոցա համար պատշաճաւոր տեղ, եւ դորա համար վատ ճանապարհով ճանապարհորդութիւնը մարդու զաղրեցնումէ ոչ միայն ֆիզիքական այլև հոգեպէս և այդ պատճառով կաղը նոյն իսկ ուղիղ ճանապարհ գնալու ժամանակ զգումէ ոչ միայն ֆիզիքական յոգնածութիւն, այլև հոգեկան: Առհասարակ սովորական այսինքն մեքենական գործողութիւնները կարող ենք փոխել հոգեկանի, օրինակ ուսուցիչը մտնումէ դասարան, և այն խօսքերը, որ նա արտասանումէ, ողջունելով աշակերտներին, մեքենական են, որովհետեւ նոքա հազարաւոր անգամ կրկնուած են, Բայց նա այդ խօսքերը կարող է արտասանել բոլորովին գիտակցաբար, գիտութեամբ ուշադրութիւն դարձնելով այդ խօսքերի վերայ:

Մեր բերած ապացոյցները հոգեկան և բնախօսական երևոյթների փոխադարձ յարաբերութեանց մասին ցոյց են տալիս որ՝ թէև այդ երևոյթները ըստ իրենց յատկութեանց տարրեր են, բայց այնպէս սերտ և անբաժան միացած են միմեանց հետ, որ կազմում են մէկ գործարանական (օրգանական) ամբողջութիւն այսինքն հոգին և մարմինը միանում են մարդու անձնաւորութեան մէջ, Սորանից հետևումէ այն թէ՛ մարդու հոգեկան կեանքը ուսումնասիրել բոլորովին առանձին կամ բաժան ֆիզիքականից՝ ինչ մեծ անյարմարութիւն է ներկայացնում, այդ նշանակումէ բաժանել այն, ինչ որ բնութիւնից ըստ ինքեան անբաժան է:

(Սնուցէւն է յետագայ) :

(Թարգմանաբար):

ԳԼՈՐԴ. ԸԷԺ. Առաջին Լատինէ ուսանող

ՄԻՍԱԲ ԱՍԻԼԵԱՆՑ

